ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) Հայաստանի Հանրապետությունում զարգանում են մեծ թափով: Տեղեկատվական են կոչվում այն տեխնոլոգիաները, որոնք կապված են տեղեկույթի ընդունման, պահպանման, մշակման և հաղորդման հետ: Հետաքրքիրն այն է, որ թեև ՏՏ ոլորտում աշխատողների թիվը բավականին բարձր է, այնուամենայնիվ, նման մասնագետների պահանջարկն օրեցօր ավելանում է:

Հայաստանում կան բազմաթիվ կրթական ծրագրեր այս ոլորտի հանդեպ հետաքրքրություն դրսևորող սկսնակների համար: Այդպիսի ծրագրեր է մշակում ***ԹՈՒՄՈ*** *կոչված ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը: Այստեղ իրականացվում են տարատեսակ նախագծեր՝ անիմացիաներ, խաղերի մշակում, 3D մոդելավորում, ծրագրավորում, գրաֆիկական դիզայն և այլն: ԹՈՒՄՈ կենտրոններ են բացվել Երևանում, Գյումրիում և Դիլիջանում: Այսօր ԹՈՒՄՈՆ ստեղծարար կենտրոններ ունի արտասահմանյան մի շարք երկրներում՝ Փարիզում, Բեյրութում, Մոսկվայում և այլ քաղաքներում:*

Մեկ այլ հետաքրքիր ծրագիր է իրականացնում ***ԱՐՄԱԹ*** *ինժեներական և ռոբոտաշինական լաբորատորիաների համալիրը: Այստեղ 10–18 տարեկան երիտասարդները կարող են անվճար կրթություն ստանալ STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) առարկաներից: Ներկայումս ՀՀ-ում գործում են հարյուրավոր նման լաբորատորիաներ:*